



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 7

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2017 Թ. ՄԱՐՏԻ 7-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ամփոփիչ ավարտական քննությունների և ավարտական աշխատանքների նախապատրաստական գործընթացները ամփոփում:
2. Մանկավարժության ամփոփի տարեկան հաշվատվությունը:
3. Տեղեկատվություն օտարերկրյա գործուղումների նոր կարգի մասին:
4. «Չարենցյան ընթերցումներ» 10-րդ հոբելյանական գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը հայ նորագույն գրականության ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 26 անդամներից նիստին մասնակցում է 23-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ֆակուլտետի ամփոփումների վարիչներին: Հաջորդաբար ելույթ ունենալով՝ նրանք բոլորը նկատեցին, որ հիմնականում գոհ են ավարտական աշխատանքների կատարման ընթացքից, ամեն ինչ ընթանում է

բնական հունով. լավ են աշխատում թե՛ գիտական ղեկավարները և թե՛ ուսանողները: Առայժմ չեն արձանագրվել արտառոց դեպքեր:

Օրակարգի 2-րդ՝ մանկավարժության ամբիոնի 2015-2016 ուստարվա հաշվետվության առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ մ. գ. դ., պրոֆ. Նազիկ Հարությունյանը:

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

- Մանկավարժության ամբիոնում աշխատում է 21 դասախոս, որից 5 դոկտոր, պրոֆեսոր, գիտությունների 9 թեկնածու, դոցենտ, 3 ասիստենտ, 4 դասախոս: Ամբիոնն ունի նաև 6 հրավիրյալ դասախոս /ժամավճարային հիմունքներով/:

Կրթական

Մանկավարժության ամբիոնն իրականացնում է երեք կրթական ծրագիր: Մեկը՝ բակալավրիատում. <<Սոցիալական մանկավարժություն>>, երկուսը՝ մագիստրատուրայում. <<Կրթության կազմակերպում>> /առկա և հեռակա ուսուցմամբ/, և <<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>> /հեռակա/: Վերջինս բացվել է 2016-2017 ուստարում: Ուսուցման ձևը՝ հեռակա, տևողությունը՝ 1.5 տարի: Տրվում է մանկավարժի որակավորում:

Մանկավարժության ամբիոնն աշխատում է համալսարանի 12 ֆակուլտետում՝ նրանց բազային կրթական ծրագրում իրականացնելով մանկավարժական կրթաբլոկ՝ դասավանդելով մանկավարժության դասընթաց, կազմակերպելով մանկավարժական պրակտիկա:

Գիտական

Մանկավարժության ամբիոնը հաշվետու տարում տպագրել է <<ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 95-ամյա անցած ուղին>> խորագրով գիրքը և գիտական 15 հոդված: Տպագրության են հանձնվել <<Մանկավարժական բառարանը>> և <<Սոցիալական մանկավարժություն>> բուհական ձեռնարկը:

Ամբիոնում սովորում է 5 հայցորդ և 2 ասպիրանտ Հայաստանից, 2 ասպիրանտ՝ Իրանից:

Հաշվետու տարում ամբիոնում պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

Ամբիոնին կից գործում է ԲՈՀ-ի՝ գիտական աստիճաններ շնորհող մանկավարժության 065 մասնագիտական խորհուրդը / 01 և 02 թվանիշներով/: 2015 թվականի հոկտեմբերից մինչև 2016 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում խորհրդում կազմակերպվել է թեկնածուական 11 ատենախոսության պաշտպանություն:

2016 թվականի՝ հոկտեմբերի 12-ին մանկավարժության ամբիոնը մեծ շուքով նշեց հիմնադրման 95-ամյակը՝ կազմակերպելով հոբելյանական միջոցառումների շարք. Մանկավարժության կաբինետի անվանակոչության արարողություն՝ պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանի անունով, և հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված ամբիոնի հիմնադրման 95-ամյակին:

2016 թ. մայիսին ԵՊՀ-ի և Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի /ՄՄՊՀ/ միջև կնքված միջբուհական համագործակցության շրջանակներում մանկավարժության ամբիոնը համագործակցության կոնկրետ առաջարկությունների մեծ փաթեթ է ներկայացրել Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի /ՄՄՊՀ/ մանկավարժության ֆակուլտետի և նրա կազմում եղած մանկավարժության ամբիոններին:

Մանկավարժության ամբիոնը Եվրոպական կրթական հետազոտությունների ասոցիացիայի անդամ է: Ստացել է Գերմանիայի և Բուլղարիայի հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու առաջարկ:

Ուսանողական

Ամբիոնի «Սոցիալական մանկավարժություն» և «Կրթության կազմակերպում» բաժինների ուսանողներն ակտիվ մասնակցում են ֆակուլտետի, համալսարանի և միջբուհական ՈԻԳԸ-ի աշխատանքներին: Նրանցից շատերի ելույթներն ընդգրկվել են լավագույնների շարքում և տպագրվել որպես հոդված:

Մանկավարժության ամբիոնի մագիստրատուրայի ուսանող Քրիստինե Սաֆարյանն արժանացել է հանրապետության «Լավագույն ուսանող 2016» անվանակարգին:

Ամեն տարի՝ հոկտեմբերի 2-ին, որպես ավանդույթ, սոցիալական մանկավարժության բաժնի ուսանողներն ամբիոնի դասախոսների հետ միասին նշում են սոցիալական մանկավարժի միջազգային օրը՝ կազմակերպելով <<Ես սոցիալական մանկավարժ եմ>>

միջոցառումը, որի ժամանակ տեղի է ունենում առաջին կուրսեցիների երդման արարողությունը:

Ամբիոնի ուսանողներն ընդգրկված են հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում՝ դրանով իրենց մասնակցությունը բերելով ֆակուլտետի կառավարման գործընթացին:

Օրակարգի 3-րդ՝ օտարերկրյա գործուղումների նոր կարգի մասին տեղեկատվությամբ հանդես եկավ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ավագյանը: Նա խորհրդի անդամներին ծանոթացրեց վերոնշյալ կարգին և բոլոր ամբիոնների վարիչներին հանձնարարեց խստորեն հետևել դրա իրականացմանը:

«Չարենցյան ընթերցումներ» 10-րդ հոբելյանական գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը հայ նորագույն գրականության ամբիոնում հարցը **օրակարգում 4-րդն** էր: Ամբիոնի վարիչ դոց. Ս. Գրիգորյանը մասնավորապես նկատեց, որ արդեն պատրաստվում են զանազան զեկուցումներ, աշխատանքներին կմասնակցեն նաև այլ ամբիոնների և հանրապետության գիտակրթական հաստատությունների գիտնականներ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Փառանձեմ Մեյթիխանյանի «Աստվածաշնչի հատկանվանաբանություն» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը, Ս. Մուրադյանը, Ա. Մակարյանը:

Նշվեց, որ ներկայացված մենագրությունը հայ լեզվաբանության համար ակներև նորույթ պարունակող հետազոտություն է, որտեղ համակարգված քննարկվել են Սուրբ գրքի հայերեն թարգմանության հատուկ անունները, համեմատվել են դրանց հին հունարեն և ասորերեն համարժեքները, համակողմանիորեն ներկայացվել են անձնանունների և տեղանունների իմաստաբանական, ձևաբանական առանձնահատկությունները: Աշխատությունը կարևոր է հատկապես հատուկ անունների և Աստվածաշնչում դրանց ունեցած մեկնողական նշանակության վերհանման առումով:

Սույն աշխատության խմբագիրն է **Շահե ծ. վրդ. Անանյանը**: Մենագրության էջերի քանակը՝ 350 էջ (A4 ձևաչափ):

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ Փառանձեմ Մեյթիխանյանի «Աստվածաշնչի հատկանվանաբանություն» մենագրությունը երաշխավորել տպագրության:

բ/ ԼՍԵՑԻՆ – Մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Աննա Սեյրանի Ալեքսանյանին**՝ դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին մասնակցելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և Ա. Աբաջյանը:

Նշվեց, որ ասիստենտ Աննա Ալեքսանյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է:

2011 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

Տպագրել է մեկ մենագրություն և գիտական 9 հոդված, որոնցից երկուսը՝ ուսումնամեթոդական:

2010 թվականից աշխատում է մանկավարժության ամբիոնում՝ որպես ասիստենտ: Աննա Ալեքսանյանը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի սոցիալական մանկավարժության բաժնի բակալավրատում, ինչպես նաև Կրթության կազմակերպում բաժնի մագիստրատուրայում դասավանդում է «Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա», «Սոցիալական քաղաքականություն», «Մանկավարժական աքսեոլոգիա», «Կրթական հաղորդակցում», «Կրթական հետազոտությունների հիմնարար սկզբունքներն ու մեթոդները» առարկան: Սոցիալական մանկավարժության բաժնի բակալավրատում ղեկավարում է կուրսային աշխատանքներ, դիպլոմայիններ, ինչպես նաև կրթության կազմակերպում մագիստրատուրայում՝ մագիստրոսական թեզեր: ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի բակալավրատում դասավանդում է «Ընդհանուր մանկավարժություն» առարկան:

Ուսանողական գիտական ընկերության յուրաքանչյուր նստաշրջանների համար աջակցում է ուսանողներին զեկուցումների պատրաստման հարցում:

<<Ղասախոսը ուսանողի աչքերով>> հարցման վերջին ցուցանիշը եղել է 4.88:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Աննա Ալեքսանյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել մանկավարժական գիտությունների թեկնածու, մանկավարժության ամբիոնի ասիստենտ **Աննա Սեյրանի Ալեքսանյանին**՝ մասնակցելու դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ